ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/115

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 07.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6775-2021 գրությամբ «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2021թ. թիվ ՊՆ/02/2238-2021 գրության հիման վրա 03.05.2021թ. թիվ 26/26-1/6775-2021 գրությամբ նախաձեռնել է «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/115 ընթացակարգի քննության նպատակով 10.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ 2 աշխատանքային օրով հետաձգելու նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերջինիս միջնորդությունը բավարարվել է և տրամադրվել է 2 աշխատանքային օր ժամկետ, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից դիրքորոշում է ներկայացվել 20.05.2021թ., որպիսի պայմաններում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 4-րդ կետով սահմանվում է, որ ***<u>Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում</u>***, գրավոր ***<u>դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին</u>***, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Հիմք ընդունելով վերը նշված կարգավորումը՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից 20.05.2021թ. ներկայացված դիրքորոշմանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման մեջ չի անդրադարձել, այն հիմնավորմամբ, որ նախաձեռնված ընթացակարգը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 17.05.2021թ. և որոշման հրապարակման օր է նշանակվել 21.05.2021թ.-ը, այսինքն՝ Ընկերությունը կարող էր և սահմանափակված չէր որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրը՝ 18.05.2021թ. ներառյալ, ներկայացնելու գրավոր դիրքորոշում, մինչդեռ դիրքորոշումը ներկայացվել է վերը նշված կարգավորմամբ

սահմանված ժամկետից ուշ՝ որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստին նախորդող օրը՝ ժամը 17:06-ին:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.04.2021թ. թիվ ՊՆ/02/2238-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/4» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՕԲՈՐՈՆ Տեքստիլ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 08.04.2021թ. ժամը 11:00, սակայն Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով չի ներկայացրել հայտի ապահովումը: 2021թ. ապրիլի 16-ին Մասնակցին ծանուցվել է հայտի ապահովման շտկման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովումը, ուստի 21.04.2021թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «ՕԲՈՐՈՆ Տեքստիլ» ՍՊ ընկերության հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/115 ընթացակարգի շրջանակներում 10.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/4» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտով չի ներկայացվել հայտի ապահովումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 16.04.2021թ. նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 16.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6775-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2021թ. թիվ ՊՆ/02/2238-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված)

տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/4» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտով չի ներկայացվել հայտի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 16.04.2021թ. նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 16.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ***<u>հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:</u>***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը</u>***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>:

Այսպիսով՝ վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով հայտով ներկայացնել հայտի ապահովում, իսկ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, ընդ որում հայտով չներկայացնելու դեպքում նախատեսվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնելու և մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն՝ միևնույն ժամանակ

Կարգի 42-րդ կետով սահմանելով իմպերատիվ պահանջ՝ սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերությունը, ոչ միայն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն, ի սկզբանե հայտով չի ներկայացրել հրավերով սահմանված հայտի ապահովումը, այլև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.04.2021թ. Կարգի 41-րդ կետի համաձայն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո ևս սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովումը, արդյունքում «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6775-2021 գրությամբ «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**